րութեան համար, որ է թագաւորութիւն հոգեւոր։ Դեռ ո՛րչափ փոփոխուելու կարօտութիւն ունինք. ո՛րչափ մեծնալու եւ նաեւ վերածնելու։ Մեր զօրութեանցն վեր զօրութիւն, մեր մարդկային կարողութենէն վեր մի կարողութիւն միայն կարող է բարձրանել զմեզ մինչեւ այն տեսութեան կէտն, ուստի ամենայն ինչ իւր գրութեամբ կ'երեւի, փոքրըն՝ փոքր եւ մեծն՝ մեծ։ Խնդրենք ուրեմն այն վերին Կարողութենէն, որ կը տնօրինէ ամենայն ինչ, որ կը տնօրինէ ներքոյն եւ արտաքոյն, որ Տէրն է յաւիտենականութեան. խընդրենք որ ինչպէս ուրիշներուն տուած է, մեզ եւս տայ սրտի աչքեր, որ կարողանանք իմաստութիւնն տեսնել։

ՎԱՍՆ ԹԱԼԵՀԻ ԵՒ ՊՌՃԻ

Ի Ցըլէկ Երգչէ.

Մարդոյն որ Թալեհն ու Պուռճն՝ ՚ի Ֆալաքն չէ ըղորդած.
Թէ շատ եւ քիչ ջանայ՝ թէ ըղորդել, նա այլ խակ է ծըլուած.
Բանին ըղորդն ու ծուռն՝ գէշն ու աղէկն, ՚ի Զարխն է կապած.
Եւ յոր ծննդեան մարդոյն, ո՞ր մօրէն է ինք բաժանած.
Զտովլաթն՝ երբ կուտայ Աստուած, նա կուգայ ամենն աջողած.
Բայց զայն իմանալ պիտի, թէ Թալեհն յո՞ր Պուռճ է անկած.
Թէ Պուռճըն ու Թալեհն աղէկ, յԱստուծոյ է քեզ հրամայած,
Զինչ յաշխարհս մարդ որ կայ, ղերթ մշակ առաջդ են կանգնած։
Այն մարդն որ Թալեհ չունի, յամենայն տեղիք նա ծեծած.
Ջանայ թէ մէկիկ խօսի, քան զոսկուոլ աղէկ նա գրած.
Կանչէն թէ քանի՞ ասես, քո ամէն բաներդ է հոտած.
Զօրն դու ՚ի հաջ կենաս, յԱստուծոյ հատած ու անիծած.
Այն մարդն որ Թալեհ ունի, յումէքէ խակի չէ ծեծած.
Զօրն կայ պարապ նստած, շատ բարիք ՚ի մօտն է կուտած.
Զինչ որ կու խօսի, աղւոր մարդարտով բաներն է շարած.
Թագաւոր եւ դատաւորի մօտ եւ ամենայն տեղիք մեծարած.
Թէ ճարտարութեամբ ունէր մարդ ըհացն զինչ իւր էր հրամայած.
Անդէտն տառապեալն յաշխարհիս վերայ չ'պիտէր մէկիկ ապրած.
Ի սերմանելոյ ժամն կու լինի այս ցեղ հանդիպած.
Մէկըն թագաւոր լինի, մէկըն աղքատ՝ եւ մէկըն ցաւած,
Մէկին ծերութիւն հասնի, ու ամէն բաներն յաջողած.
Մէկին գերութիւն հասնի, կամ կորիճ օրօք նա մեռած.

digitised by A.R.A.R.@

Կամ ինքն 'ի մորէն ծնած , աչք չի կայ . կամ կոճղ է անկած .
Զայս ոնց կարենանք գիտել թէ՝ այս յէր է հանց (1) բաժանած ։
Մտաքս յայս բանիս վերայ , շատ ատեն 'ի հոգս եմ անկած .
Կասեմ թէ՝ էր այս եղեր , որ ամենն հաւասար չէ ղուգած .
Ամենն փոլաքին արարքն , մէկին հաշտ՝ մէկին խռոված .
Ի մէկէն սիրով հայի , մէկալին դէմն խաղուած ,
Շատ հասարթ (2) ունիմ 'ի սիրտս , բայց այսով եմ խիստ շուարած .
Աւաղ թէ մեռնիմ պարտաքս , և չը լինի պարտքս վճարած .
Աստուած , մի՛ առներ 'ի յիմ շատ մեղացս , որ յիմմէ գործած .
Մինչ որ վճարի պարտքերս , որ 'ի յիմ շալակս է հանած .
Յայնժամ թող ելնու հոգիս , մահն մեզ համար է հրամայած .
Մարմինս 'ի հողին հանգչի , յօրէս այս մինչ 'ի կատարած .
Մարդոյն որ իւր հայն ու բախտն ու ոճիին՝ 'ի վերն է գրած .
Զօրն՝ թէ գաւառած կենայ՝ թէ պարապ , նա ինքն է հասած .
Ո՛չ խիստ արտորալ պիտի , և ո՛չ անհոգ 'ի վայր նստած .
Բայց պարտ է արթուն կենալ , վերուստ է ամեն պատրաստած .
Օրհնեալ Արարիչն Աստուած , յամենայն լեզուէ նա գոված .
Հանապազ 'ի նա դիմենք , որ թողու զմեր մեղքն 'ի բաց .
Անճառ և անքննին Աստուած , որ դու յոյս ես մեղաւորաց .
Մեղապարտ Սեբաստացւոյս (3) , լէր յաւուրն յետնում՝ ողորմած .
Թէպէտ յանցանաւոր եմ ես , դու շնորհես ձիր պարգեւաց .
Արժանացո՛ ընդ նոսին , որք յաջակողմեանդ են դասած ։

(1) Այսպէս . — (2) Կարօտ . փափաք . — (3) Այն ռամկական ոտանաւորն , որ օրինակուած է Ս . Աթոռոյս Թանգարանի գրչագիրներին , քանի մի ձեռագրաց մէջ կը գտնուի , և ամենց մէջ վերջին չորս տողերն կը պակսին , ուր Սեբաստացի անունն յիշուած է , որ թերեւս օրինակողի անուն եւ յաւելուած լինի , քան թէ հեղինակի . իսկ ՖՐԻԿ անունն , յայտնի է թէ բանաստեղծական անուն է , եւ հաւանական կը կարծուի , որ կամ Յով . Պուզ վարդապետին է և կամ Խաչատուր Դեչառեցւոյն ։

digitised by A.R.A.R.@